ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 598-Ա « 18 » ապրիլի 2026 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունվարի 14-ի հ. 161-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին 2026 թվականի մարտի 12-ի Դ-24042-26 գրությունը և աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի ապրիլի 02-ի հ. Ն/20480-26 զեկուցագիրը.

1.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեով, Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի, 09 խմբի, 01 դասի «Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպություններ ծրագրերին» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով նախատեսված գումարներից «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ -ին հատկացնել 30000.0 (երեսուն միլիոն) հազ. դրամ՝ աշխարհահռչակ դաշնակահար Լանգ Լանգի մասնակցությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի 20-րդ հոբելյանին նվիրված համերգային ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետին կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր:

3.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխան-ատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի վրա:

4.Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ՝ Լ.Հովհաննիսյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ